"Ֆոր Էյ Քնսալթինգ" ՓԲԸ

Լիցենզիա ԱԾ 102
Հասցե Նալբանդյան 50/136 , ք Երևան ՀՀ,
Հեռախոս +374(10) 52 08 47

www. 4aconsulting.am
info@4aconsulting.am

"Four A Consulting" CJSC

License ԱԾ 102
Address Nalbandyan 50/136, Yerevan, RA
Telephone +374(10) 52 08 47

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

"ՌԱԴԻՈ ՊՌՈ" ՍՊԸ -ի մասնակցին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել "Ռադիո" ՊՌՈ ՍՊԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2019թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Ընկերության 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերը ճշմարիտ և իրական պատկերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ "*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*" բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված "Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի" (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր ՖՀՄՍ-ների համաձայն, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելուհամար:
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:
Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալիհետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

23 ապրիլի 2020թ.

Անիկ Մարտիրոսյան

Տնօրեն-Բաժնետեր /Աուդիտի ղեկավար

«ՖՈՐ ԷՅ ԿՈՆՍԱԼԹԻՆԳ»
"FOUR A CONSULTING"
00148693

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	10,153	2,601
Ոչ նյութական ակտիվներ		397	404
		10,550	3,005
Ընթացիկ ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	5	20,296	18,495
Տրված փոխառություններ	6	9,790	39,006
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	7	25,942	23,176
		56,028	80,677
Ընդամենը ակտիվներ		66,578	83,682
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ			
Կանոնադրական կապիտալ	8	50	50
Կուտակված շահույթ		54,058	73,157
		54,108	73,207
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված հարկային պարտավորություն		-	0
		-	0
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	9	10,139	5,607
Շահութահարկի գծով պարտավորություն		2,331	4,868
		12,470	10,475
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		66,578	83,682

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 23 ապրիլի 2020թ.

Անուշ Նիկողոսյան

Տնօրեն/գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 22-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ		2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Իրացումից հասույթ		119,860	78,910
Այլ եկամուտ		2	700
		119,862	79,610
Աշխատավարձի գծով ծախս		(41,241)	(25,542)
Վարձակալական ծախսեր		(7,343)	(9,890)
Մաշվածության և ամորտիզացիայի ծախսեր		(2,362)	(1,552)
Այլ ծախսեր	10	(51,551)	(11,993)
Գործառնական գործունեությունից օգուտ		17,365	30,633
Այլ ֆինանսական հոդվածներ		99	-
Շահույթ մինչև հարկերը		17,464	30,633
Շահութահարկի գծով ծախս	11	(7,312)	(5,720)
Զուտ շահույթ		10,152	24,913
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		10,152	24,913

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 22-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: